ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ԲԿԳԿ-26/5>>

ք. Երևան 27/02/2026թ.

ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն, ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Ղարիբյանի,, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«ՊՌՈ-ԳՐԵՍ ՔԱՍԹԸՄՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը** */ՀՎՀՀ՝ 01039639, պետական գրանցման համարը՝* 282.110.1240193 (այսուհետ՝ **Կատարող**) ի դեմս ընկերության տնօրեն Մ. Ստեփանյանի որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով, Պատվիրատուի անունից և Պատվիրատուի հաշվին մատուցել 1.2 կետով նախատեսված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների դիմաց:

1.2. Կատարողը Պատվիրատուի անունից իրականացնում է Պատվիրատուին հասցեագրված (ուղարկված) կամ Պատվիրատուի անունից առաքվող բեռների մաքսային հայտարարագրում՝ գործող մաքսային օրենսդրությանը համապատասխան և դրա հետ կապված անհրաժեշտ այլ ծառայություններ **(այսուհետ նաև՝ Ծառայություններ)**:

1.3. Կողմերն ընդունում են, որ Ծառայությունների մատուցման հետևանքով Պայմանագրի շրջանակներում Կատարողն այլ անձանց և մարմինների, ինչպես նաև մաքսային մարմինների հետ իրավահարաբերություններում գործում է Պատվիրատուի հաշվին և Պատվիրատուի անունից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կատարողն իրավունք ունի՝

2.1.1 Պատվիրատուից նախապես, ինչպես նաև Ծառայությունների կատարման ընթացքում պահանջել և ստանալ Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր,

2.1.2 Պատվիրատուից պահանջել կատարելու մաքսային օրենսդրությամբ նախատեսված պարտադիր բոլոր վճարները,

2.1.3 Պատվիրատուից պահանջել՝ իր կողմից ներկայացված հաշվին համապատասխան վճարել մատուցված Ծառայությունների դիմաց,

2.1.4 Պատվիրատուից պահանջել հատուցելու ոչ հավաստի տեղեկություններ և փաստաթղթեր տրամադրելու հետևանքով Կատարողի կրած վնասները:

2.1.5 Պատվիրատուից պահանջել Կատարողին հատուցելու մաքսատուրքերը, հարկերը, հատուկ, հակագնագցման, փոխհատուցման տուրքերը, վճարները և որևէ հիմքով հատուցված /հատուցման ենթակա/ գումարները, եթե նշված վճարումները որևէ հիմքով կատարված կլինեն / կատարման ենթակա կլինեն / Կատարողի կողմից:

2.1.6 Միակողմանի կասեցնել պայմանագրային պարտականությունների կատարումն այնքան ժամանակ, քանի դեռ Պատվիրատուի կողմից չեն կատարվել հայտարարագրման համար անհրաժեշտ հանդիպակաց պարտականությունները (պարտավորությունները): Նշված դեպքում հնարավոր իրավական հետևանքների համար, այդ թվում՝ իրավասու մարմինների կողմից կիրառվելիք տուժանքների (տույժեր, տուգանքներ և հարկադրանքի այլ միջոցներ) պատասխանատվությունը կրում է Պատվիրատուն: Եթե նշված միջոցները որևէ սուբյեկտի կողմից որևէ հիմքով կիրառվում են Կատարողի՝ այդ թվում Կատարողի աշխատակցի նկատմամբ, ապա Պատվիրատուն պարտավորվում է դրանց չափով հատուցում տրամադրել Կատարողին:

2.2 Կատարողը պարտավորվում է՝

2.2.1 Պատվիրատուի անունից առաքված կամ Պատվիրատուին հասցեագրված բեռները հայտարարագրել գործող օրենսդրությանը համապատասխան,

2.3 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1 Կատարողից պահանջել Ծառայությունների պատշաճ կատարում,

2.3.2 Կատարողից պահանջել Ծառայությունների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն՝ առանց միջամտելու Կատարողի կողմից իրականացվող բնականոն գործունեությանը:

2.4 **Պատվիրատուն պարտավորվում է՝**

2.4.1 Կատարողին նախապես, ինչպես նաև Ծառայությունների կատարման ընթացքում վերջինիս պահանջով տրամադրել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ հավաստի և ամբողջական տեղեկատվություն և փաստաթղթեր,

2.4.2 Օրենքով նախատեսված ժամկետներում կատարել մաքսային ձևակերպման ընթացքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ բոլոր վճարումները /հարկեր, տուրքեր և այլ վճարներ/,

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1 Պայմանագրի գինը 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ է : Կատարողի կողմից մատուցված յուրաքանչյուր գործարքի դիմաց Ծառայության վճարը կազմում է 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ: Յուրաքանչյուր գործարքի դիմաց կատարողի կողմից դուրս է գրվում հաշիվ վավերագիր:

Վճարումն իրականացվում է փոխանցումով՝ ներկայացված հաշվին վավերագրին համապատասխան:

3.2 Ներկայացված հաշվին համապատասխան վճարման ենթակա գումարը Պատվիրատուն պարտավոր է փոխանցել բեռի բացթողումից ոչ ուշ, քան 20 օրվա ընթացքում::

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կատարողը պատասխանատվություն չի կրում ապրանքների հայտարարագրման ոչ ժամանակին իրականացման համար, եթե նման ուշացումը պայմանավորված է վարչարարություն իրականացնող մարմնի արարքով /գործողություն, անգործություն/ վարչական ակտով և կամ/ հայեցողական լիազորությունների կիրառմամբ:

4.2 Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կատարողը պատասխանատվություն չի կրում, եթե առաջացած անբարենպաստ հետևանքները պայմանավորված են Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների (պարտավորությունների) չկատարման/թերի կատարման/ հետ, այդ թվում՝ տրամադրված տեղեկատվության և փաստաթղթերի ոչ ամբողջական և ոչ ճշգրիտ լինելի դեպքում:

4.3 Պատվիրատուն պատասխանատու է իր կողմից Կատարողին տրամադրվող տեղեկատվության և փաստաթղթերի իսկության ու ամբողջականության համար: Տրամադրված տեղեկատվության և փաստաթղթերի ոչ ճշգրիտ կամ ոչ ամբողջական լինելու ամբողջ պատասխանատվությունը և դրանց հետևանքով առաջացած անբարենպաստ հետևանքները կրում է Պատվիրատուն:

4.4 Պատվիրատուն կրում է մաքսային ձևակերպման ընթացքում վճարները ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված չափով և ժամանակին չկատարելու հետևանքով առաջացած անբարենսպաստ հետևանքների պատասխանատվությունը:

4.5 Կարատողն իրավունք չունի իրականացնել բեռների զննում (այդ թվում՝ նախնական), և մաքսային ձևակերպումները իրականացվում են Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի և տեղեկությունների հիման վրա:

4.6 Պայմանագրի վաղաժամ լուծման դեպքում Պատվիրատուն Կատարողին վճարում է վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով՝ Կողմերն իրավունք ունեն սահմանելու, որ իրենց կնքած պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ, կողմերը սահմանում են, որ սույն պայմանագրի պայմանները կիրառվում են նաև (Պայմանագրի կնքման ամսաթվից) մինչև սույն պայմանագրի ուժի մեջ մտնելը իրենց միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

5.2 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը: Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

5.3 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության: 7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

5.4 Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

5.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

5.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.12. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1 Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից:

6.2 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառելի է ՀՀ օրենսդրությունը:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են տարերային աղետները, երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, սահմանների փակումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը /այդ թվում՝ վարչական մարմինների գործողություններ, անգործությունները, վարչական ակտեր/ և այլն, որոնք անհնար են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

7.2 Եթե արտակարգ հանգամանքների (անհաղթահարելի ուժի) ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերն իրավունք ունեն լուծել Պայմանագիրը՝ նախապես տեղեկացնելով մյուս կողմին:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8.2 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՊՐՈ-ԳՐԵՍ» ՔԱՍԹԸՄՍ ՍՊԸ	**«ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե»**
Ք. Երևան, Բակունցի 11/16	Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 22
Հ/Հ 1570080449660100	Հ/Հ 900011033124
«Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՀ Ֆիննախ. Գործառն. Վարչ.
ՀՎՀՀ 01039639	ՀՎՀՀ 02704199
Տնօրեն	Գլխավոր
	Քարտուղարի պարտականությունները կատարող
Մ. Ստեփանյան _____	Կ. Ղարիբյան _____
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«27» փետրվարի 2026թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79221300/1	Առաքվող բեռների մաքսային հայտարարագրում՝ գործող մաքսային օրենսդրությանը համապատասխան և դրա հետ կապված անհրաժեշտ այլ ծառայություններ	դրամ	360 000	1	ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22	30.12.2026թ.

ԿԱՏԱՐՈՂ

«ՊՐՈ-ԳՐԵՍ» ՔԱՍԹԸՄՍ ՍՊԸ
Ք. Երևան, Բակունցի 11/16
Հ/Հ 1570080449660100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01039639

Տնօրեն

Մ. Ստեփանյան _____

Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե»
Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 22
Հ/Հ 900011033124
ՀՀ Ֆիննախ. Գործառն. Վարչ.
ՀՎՀՀ 02704199
Գլխավոր Քարտուղարի պարտականությունները կատարող

Կ. Ղարիբյան _____

Կ.Տ.

Հավելված N 2
«27» փետրվարի 2026թ. կնքված
<<ԲԿԳԿ-26/5>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	չ/մ	Ընդհանուր քանակը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*											
					I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդամենը
1	79221300	մաքսային միջնորդի (բրոքեր) ծառայություն	դրամ	1	360 000	360 000	360 000	360 000	360 000	360 000	360 000	360 000	360 000	360 000	360 000	360 000	360000
Ընդամենը՝					**360,000**												

**Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հրապարակած, փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով: Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:*

«ՊՈՌ-ԳՐԵՍ» ՔԱՍԹԸՄՍ ՍՊԸ
Ք. Երևան, Բակունցի 11/16
Հ/Հ 1570080449660100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 01039639

Տնօրեն

Մ. Ստեփանյան _____

Կ.Տ.

«ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե»
Հասցե՝ ք. Երևան, Օրբելի 22
Հ/Հ 900011033124
ՀՀ Ֆիննախ. Գործառն. Վարչ.
ՀՎՀՀ 02704199
Գլխավոր Քարտուղարի պարտականությունները կատարող
Կ. Ղարիբյան _____

Կ.Տ.

Հավելված N 3
«27» փետրվարի 2026թ. կնքված
<<ԲԿԳԿ-26/5>> ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3,1

Հավելված N 3,1
«27» փետրվարի 2026թ. կնքված
<<ԲԿԳԿ-26/5>> ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

ստորագրություն